# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 15)**

30 նոյեմբերի 2012թ. ժամը $15^{00}$

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում 3-րդ փուլի հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին:
(Սուրեն Նալչյան)

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագրի մասին:
(Բենյամին Աղամալյան)

4. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին:
(Տիգրան Քոչարյան)

**4. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Արման Բարխուդարյան)

4.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-913-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

4.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորոցիայի մասնաճյուղի):

**5. Այլ հարցեր**

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N Մ-850-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր):

5.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-911-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն):

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2012 թվականի N Մ - дг.15/1 - Ա**
**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ 3-ՐԴ ՓՈՒԼԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-1/ -12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 02/ -12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի -ի N ՎՄ/3-4/-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2300000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման 3-րդ փուլի հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԵՐԾՇՊՀ» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01506385) 2012 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ N ԼՂ/ՀՀ-09/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման վերակառուցման հեղինակային հսկողություն՝ 2300000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

дг.15/1

**Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ  Է**

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«22» նոյեմբերի 2012թ.

### «ԼՂՀ Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման հեղինակային հսկողություն»
### ԾՐԱԳԻՐ
(օժանդակ)

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նպաստել ԼՂՀ Մարտունի քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ԼՂՀ Մարտունի քաղաք, ջրամատակարարման բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 2.300.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Մարտունի քաղաքի բնակիչները |

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ օգոստոսի 14 –ից մինչեւ 2013թ. դեկտեմբերի 14-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ԵրՃՇՊՀ ՊՈԱԿ-ի կողմից ԼՂՀ Մարտունի քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման հեղինակային հսկողություն՝ 2.300.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

դ/ր-15/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

դ/ր-15/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

27.11.12 № 3/13.8-1/15443-

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.11.12թ. N 15/15.1/17016-12 գրության՝ կապված <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<ԼՂՀ Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման 3-րդ փուլի հեղինակային հսկողություն>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/31390-12

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա-15/1

*0078 Երևան, Հալաբյան 41 "ա", հեռ. 380385*
*էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

02/7427-12
29.11.12

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 23-ի**
**15/15.1/17016-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման 3-րդ փուլի հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

035/31603-12

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

Ա-15/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060 54 43 02

ՀԿ17/3-4/12654-12
26.11.12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.11.2012թ. թիվ 15/15.1/17016-12 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման 3-րդ փուլի հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.060-544652

024/31263-12

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**___ նոյեմբերի 2012 թվականի N Մ -　　　　-Ա**
**քաղ. Երևան**

ԺՐ-15/2

**«ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-1/-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N /-12, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N -12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի -ի N ՎՄ/3-4/-12 և Երևանի քաղաքապետարանի 2012 թվականի նոյեմբերի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ՀՎՀՀ՝ 01565354) իրականացվող՝ 1.25 մլրդ դրամ ընդհանուր արժողությամբ «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մեսչյան արքիտեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02705356) 2012 թվականի հուլիսի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մշակութային կենտրոնի կառուցման նախագծային աշխատանքների իրականացում՝ 40 մլն դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԼԱՎՈ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02577772) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված՝ N 111-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մշակութային կենտրոնի կառուցման նախագծի փորձաքննության աշխատանքների իրականացում՝ 800000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



ԺՐ-15/2

3) «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01807983) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքների իրականացում՝ 180268478 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ակար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02200642) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է եռակցման էլեկտրոդի մատակարարում՝ 5680000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԳԱԷՐՆՈՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02250036) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնի մատակարարում՝ 117136000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «ՄԱՌՄ-ՔԱՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04716874) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» տուֆ քարի մատակարարում՝ 2925000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՊԱՏ գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02201962) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պեմզաբլոկի մատակարարում՝ 9104000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Ռազար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03307645) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցեմենտի մատակարարում՝ 8712000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Փյունիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ Ա. Սարգսյանի կողմից

«20» նոյեմբերի 2012թ.

dr. 15/2

«Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցման»

**ծ ր ա գ ի ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանում ստեղծել Կոմիտասի անվան թանգարան-ինստիտուտ, որը պիտի դառնա լրջագույն կենտրոն թե՛ հայ, թե՛ օտար ուսումնասիրողների համար, որտեղ մեր ժողովուրդը և երկիր այցելող հյուրերը հնարավորություն կունենան ծանոթանալու Կոմիտասից անցած ամբողջ ժառանգությանը: Համալիրը կունենա թանգարանային մաս, գիտ ահետազոտական կենտրոն, համերգային դահլիճ, երաժշտական ստուդիա, գրադարան, հրատարակչություն: |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի , տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Միրիախայ բարերար Կաբրիել Ռհանեսի Դեներջի (Միրիայի Արաբական Հանրապետություն, քաղ. Հալեպ, անձնագիր՝ N003005753 տրված 16/08/07թ) և այլ անհատներ: |
| 4. | Ծրագրի կատարողը | «Փյունիկ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Երվանդ Քոչարի փողոց, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի, ՀՎՀՀ՝ 01565354) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | քաղ. Երևան, Արշակունյաց 28՝ քաղաքաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 1.25 մլրդ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012 թվական հուլիսի 12-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 30-ը: |

dr. 15/2



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Նախագծահաշվարկային աշխատանքներ՝ 2012 թվականի հուլիսի 12-ից մինչև դեկտեմբերի 4-ը – 40 մլն դրամ:<br>2. Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 2012 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 1-ը - 1183 մլն դրամ:<br>3. Կահավորում՝ 2013 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 30-ը – 27 մլն դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Նախագծահաշվարկային աշխատանքներ՝ 40 մլն դրամ:<br>2. Շինարարական աշխատանքներ՝ 180264478 դրամ:<br>3. Շինարարական նյութերի ձեռքբերում՝ 902731522 դրամ:<br>4. Շինարարական նյութերի ներմուծում՝ 100 մլն դրամ:<br>5. Կահավորում՝ 27 մլն դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Երևանի քաղաքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և բարերարներին կներկայացվեն հաշվետվություններ՝ ծրագրի իրականացման ընթացքի ու ավարտի վերաբերյալ: |

կազմեց Ս. Նալչյան

dr. 15/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Հր. 15/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.11.2012թ. № 3/3.8-1/15506-12

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.11.12թ. N 15/15.6/17095-12 գրության՝ կապված «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/31511-12
28.11.2012թ.

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Հր. 15/2

0078 Երևան, Հալաբյան 41ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

№: 02/7400-12
28.11.2012թ.

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 26-ի
15/15.6/17095-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցման» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

035/31506-12
28.11.2012թ.

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

մր.15/2

N 05/3.1/4881-12 "27" 11 2012 թ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2012 թ. նոյեմբերի 26-ի N 15/15.6/17095-12 գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք և առաջարկում ենք այն որակել բարեգործական:

Հարգանքով՝
Նախարարի տեղակալ՝

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Կատ.՝ Գ. Գոյումջյան
Հեռ.՝ 56-40-50

021/31373-12
27.11.2012թ.

0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հեռ./Тел./Tel.: 52 93 49, ֆաքս/факс/fax (374 10) 52 39 22,0010, Ереван, Площадь Республики, Дом правительства 3, Government Building 3, Republic Square, Yerevan 0010,
էլ. փոստ/ Эл. почта/ E-mail: info@mincult.am, www.mincult.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

մր.15/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060-54 43 02

№ ՀՄ/3-4/12780-12
29.11.2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.11.2012թ. թիվ 15/15.6/17095-12 գրությանը կից ներկայացված «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցման» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.060-544652

044/31553-12
29.11.2012թ.

# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

մր.15/2

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 02/ 56760հ «27» 11 2012թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.11.2012թ. հ.15/15.6/17095-12 գրության՝ տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին որոշման նախագիծը, որի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝ Կ. ԱՐԵՅԱՆ

100-31378
27 11 2012

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**նոյեմբերի 2012 թվականի N Մ- -Ա** մր.15/3
**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 155 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴՌՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-1/ -12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 02/ -12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-5/ -12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի -ի N ՎՄ/3-4/ -12 և Երևանի քաղաքապետի 2012 թվականի նոյեմբերի -ի N -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ադոնցի 15, բն. 20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 3437500 դրամ արժողությամբ «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ.Մ.Մ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02214638) 2012 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված N 6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների և պատուհանների պատրաստում ու տեղադրում՝ 1996900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

Հաստատված է

«Կամրջակ» ՍԲՀԿ

տնօրեն Բ. Աղամալյանի կողմից

16 նոյեմբեր 2012 թ.

**«Երևանի Թիվ 155 մանկապարտեզի արտաքին դռների և լուսամուտների տեղադրում»**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 155 մանկապարտեզի արտաքին դռներ և լուսամուտների փոփոխում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | "Սթիխթինգ Մենսենկինդրե" ՀԿ Stichthing Mensenkinderen NGO հասցե Փոստրոս 320 - 3840 AH Harderwijik Հոլանդիա : |
| 4. | Ծրագիրն կատարողը | «Կամրջակ » ՍԲՀԿ-ն իրավ․ հասցե՝ Ք.Քանաքեռցու, աշխ.՝ Կորյունի 3 -14/1 ՀՎՀՀ 01003187, Հեռ՝ 516-044, ֆաքս՝ 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Երևան, Քանաքեռ Զեյթուն համայնքի թիվ 155 մանկապարտեզ , հասցեն՝ Վահե Վահյան 1, ՀՎՀՀ ՝00825795, Հեռ 010-287880, բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 3437500 (երեքմիլոն չորս հարյուր երեսունյոթ հազար հինգհարյուր դրամ), որից 1440600 դրամը համաֆինանսավորվում է Քանաքեռ Զեյթուն համայնքը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Քանաքեռ Զեյթուն համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թվականի հոկտեմբերի մինչև․2013 թվականի մարտի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | "Մ.Ս.Մ" ՍՊԸ –ի հետ կնքվել է պայմանագիր դռներ և լուսամուտների գնման և տեղադրման կապակցությամբ 3437500 դրամի մչափով, որից 1440600 դրամը համաֆինանսավորում է Քանաքեռ Զեյթուն համայնքի կողմից |
| 10. | Ձեռք բերվեող(ներմուծվող) ապրանքներերի նու ծառայությունների համառոտ նկարագիրը,ծավալները և նախատեսվող գինը | "ՄՄՄ"ՍՊԸ –ի հետ կնքվել է պայմանագիր դռներ և լուսամուտների գնման և տեղադրման կապակցության : Ընդհանուր դռներ և լուսամուտների ծավալը կազմում է 59,2 քառակուսի մետր : պայմանագրի գինն է 3437500 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը,պետական կառավարման ,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացվում է «Կամրջակ»ՍԲՀԿ-ի կողմից, համագործակցելով Քանաքեռ Զեյթուն համայնքի ղեկավարության և մանկապարտեզի տնօրինության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է «Կամրջակ»ՍԲՀԿ-ի և Քանաքեռ Զեյթուն համայնքի ղեկավարության կողմից և աշխատանքները կատարելուց հետո՝ սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |

«Կամրջակ» ՍԲՀԿ տնօրեն Բ. Աղամալյան

ԱՈ.15/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

ձր.15/3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.11.12 № 3/38-1/15749-12

Ձեր № ______________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 20.11.12թ. N 15/15.1/16781-12 գրության՝ կապված «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագրի հետ, հայտնում ենք, որ որոշման նախագծի 2-րդ կետում նշված պայմանագրի գումարը չի համապատասխանում ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նշված պայմանագրի գումարին:

Հարգանքով

[signature]

Ատոմ Ջանջուղազյան

034/30865-12

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** ձր.15/3

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

02/4254-12
21.11.12

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 20-ի**
**15/15.1/16781-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագրի 5-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ «Ծրագիրն ստացողը» բառերի փոխարեն անհրաժեշտ է նշել «Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը» բառերը, քանի որ ծրագրի 7-րդ կետում արդեն նշված է բարեգործություն ստացողը, իսկ 5-րդ կետում խոսքը պետք է գնա ծրագրի իրականացման վայրի և բնագավառի մասին: Ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել միջոցառումների իրականացման ժամկետները:

Այդ առումով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:

**Հարգանքով՝** [signature] **Գ. Մուրադյան**

035/30898-12

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

դր-15/3

«23» 11 2012 թ. N 8Ր/ԱՖԱ-51

8423-12

Ձեր 2012-11-20, 15/15.1/16781-12

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագրի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

040/31047-12

Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mss.am info@mss.am

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

դր-15/3

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060-54 43 02

ՎԱ/3-4/12539-12
22.11.12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 20.11.2012թ. թիվ 15/15.1/16781-12 գրությանը կից ներկայացված «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.060-544652

044/30964-12

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ**

**ՏԵՂԱԿԱԼ**

Հր-15/3

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№02/34-557806 «27» 11 2012թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 20.11.2012թ. հ.15/15.1/16781-12 գրության՝ տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագրի մասին որոշման նախագիծը, որի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝ [signature] Կ. ԱՐԵՅԱՆ

2238

...ՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 100-31452
«28» 11 2012

Կատ. Ռ. Զաքարյան
հեռ. 51 41 79

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ**
**ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հր-15/3

«02» 11 2012թ.
N 515261 31/01-3/486

ք. Երևան, Դ.Անհաղթի 11
հեռ. 28-71-17

*«Կամրջակ» ՍԲՀԿ տնօրեն*
*Բենիամին Աղամալյանին*
*ք. Երևան, Կորյունի 3-14/1*

*Հարգելի պարոն Աղամալյան*

*Հայտնում եմ մեր խորին շնորհակալությունը մանկապարտեզներում Ձեր [illegible] 155 մանկապարտեզում Ձեր կողմից իրականացվելիք ծրագրերը և միաժամանակ տեղեկացնում եմ, որ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի աշխատակազմը պատրաստ է թիվ 155 մանկապարտեզի երկրորդ հարկի պատուհանների փոփոխման համար նախատեսված 1.440.600 / մեկ միլիոն չորս հարյուր քառասուն հազար վեց հարյուր / դրամ գումարը «Կամրջակ» ՍԲՀԿ հաշվեհամարին փոխանցել 2013թ. 1-ին եռամսյակում:*

[signature] Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

*Հ. Բաբաեկյան*
*28-39-56*

մ.15/3

ՏԵՂԵԿԱՆՔ

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 21.11.12, N 3/3.8-1/15179-12 | |
| 1. Որոշման նախագծի 2-րդ կետում նշված պայմանագրի գումարը չի համապատասխանում ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նշված պայմանագրի գումարին | 1. Ինչպես նշված է ծրագրի 6-րդ կետում պայմանագրի արժեքի մի մասը համայնքային բյուջեից է և ԱԱՀ-ից չի ազատվում |
| ՀՀ արդարադատության նախարարություն – 21.11.12, N 02/7254-12 | |
| 1. Ծրագրի 5-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ «Ծրագիրն ստացողը» բառերի փոխարեն անհրաժեշտ է նշել «Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը» բառերը, քանի որ ծրագրի 7-րդ կետում արդեն նշված է բարեգործություն ստացողը, իսկ 5-րդ կետում խոսքը պետք է գնա ծրագրի իրականացման վայրի և բնագավառի մասին: Ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել միջոցառումների իրականցման ժամկետները | 1. Վրիպակը ուղղված է: Դռների, լուսամուտների պատրաստումը և տեղադրումը իրականացվում է միաժամանակ, առանձին միջոցառումներ նախատեսված չեն |

մ.15/4

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ նոյեմբերի 2012 թվականի N Մ- -Ա մ.15/4

քաղ. Երևան

## «ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 3.8-1/, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն 2012 թվականի նոյեմբերի -ի N , Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N ՖՊ/ԱՆՄ-, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի -ի N ՎՄ/3-4/ և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի նոյեմբերի -ի N 102.1/104.3/ եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Բարեգործական որակել «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող 61.623.000 դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ՝ 06940684) ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (քաղ. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մարտի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 2.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ -ի Լոռու կենտրոնի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի մարտի 14-ին կնքված N 510100708 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 620.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

մ.15/4

3) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի հետ (քաղ. Վանաձոր, Զոփաչյան 2/2ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2012 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 04104061780 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 4000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Էյ Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2012 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 4-59 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի հունվարի 10-ից մինչև 2014 թվականի հունվարի 10-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 101.187 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Սպարապետ» ՍՊԸ -ի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ՝ 06915002) 2012 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N 12-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը սննդամթերքների և տնտեսական ապրանքների ձեռքբերում՝ 16.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ -ի հետ (քաղ. Երևան, Հանրապետության 78/26, ՀՎՀՀ՝ 00419022) 2012 թվականի նոյեմբերի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը աուդիտի ծառայությունների մատուցում՝ 270.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ա-15/4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

22.11.2012թ №3/3.8-1/15228-12

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 15.11.12թ. N 15/15.8/16552-12 գրության՝ կապված «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ գրությամբ ներկայացված «Էյ Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ 01.11.2012թ. կնքված թիվ 4-59 պայմանագրի գինը 2.1 ենթակետում նշված է 101.187 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ նախագծի 4-րդ կետում տվյալ գործարքը նշված է նույն գումարով՝ առանց ԱԱՀ-ի:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

034/31012-12
22.11.2012թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ա-15/4

№ 02/7263-12
22.11.2012թ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 15-ի
15/15.8/16552-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ. 380-227

035/30821-12
22.11.2012թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ԱՌ-15/4

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060 54 43 02

№ ԿՄ/3-4/12354-12
19.11.2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.11.2012թ. թիվ 15/15.8/16552-12 գրությանը կից ներկայացված «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.060 544652

044/30606-12
19.11.2012թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՌ-15/4

« 19 » 11 2012 թ. N ՖԲ/ԱՀ5-5/8256-

Ձեր 2012-11-15, 15/15.8/16552-12

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

040/30604-12
19.11.2012թ.

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mss.am info@mss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1
/0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

մր-15/4

թիվ 101/104.3/6384-12
«19» նոյեմբերի 2012 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 15.11.2012թ. թիվ 15/15.8/16552-12 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Լոռու մարզպետարանը չի առարկում «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից 2013թ. իրականացվելիք ծերանոցի կենսապահովման ծրագիրը բարեգործական որակելուն:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

114/30637-12
19.11.2012թ

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

մր-15/4

**Տեղեկանք**
**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ:**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողության և առաջարկության վերաբերյալ | |
| Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ գրությամբ ներկայացված «Էյ Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ 01.11.2012թ. կնքված թիվ 4-59 պայմանագրի գինը 2.1 ենթակետում նշված է 101.187 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ նախագծի 4-րդ կետում տվյալ գործարքը նշված է նույն գումարով՝ առանց ԱԱՀ-ի: | Որոշման նախագծի վերաբերյալ հիմնադրամը 2012 թվականի նոյեմբերի 29-ի N 96 գրությամբ ներկայացրել է պարզաբանում: |

«ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"VANADZOR OLD AGE HOME" FOUNDATION Ա-15/4

2009, Վանաձոր, Մայմեխի 8 Հեռ. (322) 4-32-11, 2-37-45 Maymekh 8, Vanadzor, Armenia

Թիվ 96

«29» նոյեմբերի 2012թ.

ՀՀ կառավարության
բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի Ս. Տեր-Սիմոնյան

Ս.թ. նոյեմբերի 14-ին Ձեզ ներկայացվել են 2013 թվականին «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվելիք ծրագիրը և համապատասխան պայմանագրերը, որտեղ ներկայացված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման «Էյ-Ի-Ջի» ՍՊԸ-ի հետ կնքված 4-59 պայմանագրում թույլ է տրվել վրիպակ: Խնդրում ենք Ձեզ պայմանագրի 2-րդ կետի 2.1 ենթակետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«Կատարողի մատուցած Ծառայությունների դիմաց Պատվիրատուն պարտավորվում է վճարել 101 187 (մեկ հարյուր մեկ հազար մեկ հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ, /առանց ԱԱՀ-ի/»:

«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի տնօրեն Տ. Քոչարյան

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**նոյեմբերի 2012 թվականի N Մ - - Ա** Ա-15/4.1
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-913-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-1/ -12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի -ի N ՎՄ/3-4/ -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի և բազմաֆունկցիոնալ սրահի կառուցման նախագծում» ծրագր մասին» N Մ-913-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում «մինչև 2012 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2013 թվականի փետրվարի 20-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ի կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2012 թվականի նոյեմբերի 20-ին կնքված՝ N 83 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 125000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

մր.15/4.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

27.11.12 №3/3.8-1/15428-12

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.11.12թ. N 15/15.1/16986-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. նոյեմբերի 9-ի N Մ-913-Ա («Հայաստան» համահայկական հիմնադրամ») որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ կնքված գործարքի) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/31320-12

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵ[Ր]
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

մր.15/4.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060 54 43 02

կմ/3-4/12653-12
26.11.12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.11.2012թ. թիվ 15/15.1/16986-12 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի NՄ-913-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի 1.3 կետում գործարքի վերջնաժամկետ է նշված 2013թ. փետրվարի 20-ը, այն դեպքում, երբ վերը ծրագրի 7-րդ կետի համաձայն ծրագիրն ավարտվում է 2012թ. դեկտեմբերի 30-ին: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ կից ներկայացված գործարքի իրականացման ժամկետը համապատասխանեցնել ծրագրի ժամկետներին:

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.060 544 652

044/31262-12

Հայաստան Համահայկական
Հիմնադրամ
գործադիր վարչություն
Hayastan All-Armenian Fund

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Կառավարական 3-րդ մասնաշենք
Government Building 3, Yerevan 0010
Republic of Armenia
tel: (37410) 52 15 05 fax: (37410) 52 37 95
E-mail: info@himnadram.org

ԺՄ-15/4.1

29 նոյեմբերի 2012 թ. ՀՀՀ. 5/27-451

ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

ՀԱՅՏ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Սույն թվականի նոյեմբերի 11-ի ՆՄ-913-Ա որոշման համաձայն բարեգործական է որակվել «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կողմից ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի և բազմաֆունկցիոնալ սրահի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման իրականացման ծրագիրը: Նույն ծրագրի շրջանակներում կնքված նախագծի փորձաքննության վերաբերյալ պայմանագրի ժամկետը գերազանցում է ծրագրի տևողությունը:

Խնդրում ենք երկարացնել վերոնշյալ ծրագրի տևողությունը մինչև 2013 թվականի փետրվարի 20-ը՝ փոփոխություն կատարելով որոշման համապատասխան կետերում:

Հարգանքով՝

Արա Վարդանյան
Գործադիր տնօրեն

Արմինա Դարբինյան

094-31599
«22» 11 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 նոյեմբերի 2012 թվականի Ն Մ - 913 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-ՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ԳՅՈՒՂԻ ԲՈՒԺԿԵՏԻ ԵՎ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 7-ի N 3/3.8-1/14509-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 02/6949-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N ԴԴ/22/11125-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N ՎՄ/3-4/11924 -12 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 12-ի N 01/21/4823-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1980000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի և բազմաֆունկցիոնալ սրահի կառուցման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ումեդյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02579229) 2012 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N ՀՀ/ՆՆ-05/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի և

բազմաֆունկցիոնալ սրահի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 1800000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն՝ այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյան

«08» հոկտեմբերի 2012.թ.

## «ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի և բազմաֆունկցիոնալ սրահի կառուցման նախագծում» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բնակիչների կյանքը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ Խաչարձան գյուղ, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.980.000 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի բնակիչները |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ հոկտեմբերի 01 -ից մինչեւ 2012թ. դեկտեմբերի 30-ը: |

| | | |
|---|---|---|
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ռիմեդյան» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի և բազմաֆունկցիոնալ սրահի կառուցման նախագծում՝ 1.800.000 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>Նախատեսվում է նաև նախագծի փորձաքննություն 180.000 դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
Արմինե [illegible]

# ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-913-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե -26.11.12, N ՎՄ/3-4/12653-12 | |
| 1. Կից ներկայացված «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի 1.3 կետում գործարքի վերջնաժամկետ է նշված 2013թ. փետրվարի 20-ը, այն դեպքում, երբ վերը ծրագրի 7-րդ կետի համաձայն ծրագիրն ավարտվում է 2012թ. դեկտեմբերի 30-ին: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ կից ներկայացված գործարքի իրականացման ժամկետը համապատասխանեցնել ծրագրի ժամկետներին | 1. Նախագծում կատարված է համապատասխան փոփոխություն |

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**___ նոյեմբերի 2012 թվականի N Մ- -Ա** դր. 15/4.2
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**<u>(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)</u>**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի -ի N ՎՄ/3-4/-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «2013թ. մարտ» բառերը փոխարինել «2013թ. հոկտեմբեր» բառերով:

2. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մեխտրանս» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00405029) 2012 թվականի նոյեմբերի 16-ին կնքված՝ N 32 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մոնտաժային, բեռների բարձման, բեռնաթափման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 10 մլն դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պայքար Գրիգորյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 52175959) 2012 թվականի նոյեմբերի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» ծիրանագույն



դր-15/4.2

տուֆ քարից ապրանքների մատակարարում՝ 14695280 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ջի ընդ էյ ինքորփորեյշն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01839901) 2012 թվականի նոյեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» ծիրանագույն տուֆ քարից ապրանքների մատակարարում՝ 28533526 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Սարգիս-Արա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05013865) 2012 թվականի նոյեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» ծիրանագույն տուֆ քարից ապրանքների մատակարարում՝ 14742743 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Գաշես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04222383) 2012 թվականի նոյեմբերի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 93405450 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ՀՐ-15/4.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

27.11.2012թ. №3/3.8-1/15446-12

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.11.12թ. N 15/15.6/17032-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. մարտի 19-ի N Մ-176-Ա (<<Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն>> կորպորացիայի մասնաճյուղ) որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Մեխտրանս>> ԲԲԸ-ի, <<Պայքար Գրիգորյան>> ԱՁ-ի, «Ջի ընդ էյ ինքորփորեյշն» ՓԲԸ-ի և «Սարգիս-Արա» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրեր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Միաժամանակ հայտնում ենք, որ որոշման նախագծի 5-րդ կետում նշված պայմանագրի ամսաթիվը չի համապատասխանում որոշման նախագծին կցված <<Գաշես>> ՍՊԸ-ի պայմանագրի ամսաթվին:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/31394-12
27.11.2012թ.

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐ-15/4.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060 54 43 02

№: ՎՄ/3-4/12779-12
29.11.2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.11.2012թ. թիվ 15/15.6/17032-12 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի NՄ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված «Մեխտրանս» ԲԲԸ-ի, «Սարգիս-Արա» ՍՊԸ-ի և «Գաշես» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի համաձայն՝ իրականացվող գործարքների վերջնաժամկետները գերազանցում եմ ծրագրի 8-րդ կետում նշված ժամկետը: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում ճշտել նշված անհամապատասխանությունները:

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.060 544652

044/31555-12
29.11.2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2010 թվականի N Մ - 176 - Ա

## «ՀՐԱՅՐ ԵՎ ԱՆՆԱ ՀՈՎՆԱՆՅԱՆ» ՖԱՈՒՆԴԵՅՇՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մարտի 4-ի N 3/3.8-1/899-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի մարտի 5-ի N Ե 1103, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2010 թվականի մարտի 4-ի N 01/13.2/579-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մարտի 10-ի N 6955/3-4 և Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի մարտի 3-ի N 02/34-3808-h եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել «Հրայր և Աննա Հովնանյան» ֆաունդեյշն կորպորացիայի մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) իրականացվող՝ 1530000000 դրամ ընդհանուր արժեքով «Սուրբ Կաթողիկե եկեղեցուն կից եկեղեցական համալիրի՝ Հայրապետական նստավայրի և Սուրբ Աննա եկեղեցու կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Հրայր և Աննա Հովնանյան» ֆաունդեյշն կորպորացիայի մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետի[illegible]

ՆԱԽԱԳԱՀ [illegible]ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի տնօրեն՝ Աշոտ Պողոսյանի կողմից
19-ը փետրվարի, 2010թ.

ՀՀ, Երևան
Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշն Կորպորացիայի Մասնաճյուղ
RA, Yerevan
The Hirair and Anna Hovnanian Foundation Branch
01555988

Սուրբ Կաթողիկե եկեղեցուն կից եկեղեցական համալիրի՝ Հայրապետական նստավայրի և Սուրբ Աննա եկեղեցու կառուցման

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աբովյան 15 հասցեում գտնվող Սուրբ Կաթողիկե եկեղեցուն կից եկեղեցական համալիրի՝ Հայրապետական նստավայրի և Սուրբ Աննա եկեղեցու կառուցում: Կառուցումից հետո եկեղեցական համալիրը նվիրաբերվելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:<br>Ծրագրի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ Երևանում լինի կաթողիկական նստավայր, որտեղ կհյուրընկալվեն բազմաթիվ բարձրաստիճան հյուրեր: Շատ կարևոր փաստարկ է նաև այն, որ կվերականգնվի Կաթողիկե եկեղեցուց մնացած մատուռը, կբարեկարգվի և պատշաճ տեսքի կբերվի Երևանի կենտրոնի այդ գողտրիկ հատվածը, որն այսօր ծայրահեղ անբարեկարգ վիճակում է: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակն է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշն» կորպորացիա (հասցե՝ One Hovchild Plaza, 4000 Route 66, Tinton Falls, New Jersey 07753, USA): |
| 4. | Ծրագրի կատարողը | «Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշն կորպորացիայի մասնաճյուղ» (հասցե՝ Թամանյան փ. 2ա շենք, բն.2 , ՀՎՀՀ 01555988) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Աբովյան 15, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Բնագավառը՝ հոգևոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1,530,000,000 դրամ: Ֆինանսավորումը իրականացվում է «Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշն» կորպորացիայի կողմից: |
| 7. | Բարեգործություն ստացող | Հայ Առաքելական եկեղեցի |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի իրականացման ժամկետը 3 տարի է: Սկիզբը՝ 2010թ. մարտ - ավարտը՝ 2013թ. մարտ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն իրականացվելու է վեց փուլով.<br>Առաջին փուլ – Նախագծային աշխատանքներ և մակետ, ժամկետ՝ 2010թ. մարտ – 2010թ. հունիս, նախատեսվում է 30,000,000 դրամ:<br>Երկրորդ փուլ - Հողային աշխատանքներ, ժամկետ՝ 2010թ. մարտ – 2010թ. օգոստոս, նախատեսվում է 34,000,000 դրամ;<br>Երրորդ փուլ – Կարկասային աշխատանքներ, ժամկետ՝ 2010թ. օգոստոս – 2011թ. դեկտեմբեր, նախատեսվում է 790.000,000 դրամ;<br>Չորրորդ փուլ – Տանիքածածկման, դռների-պատուհանների տեղադրման, ներքին հարդարման և կահավորման աշխատանքներ. ժամկետ՝ 2011թ. դեկտեմբեր – 2013թ. մարտ, նախատեսվում է 359,000,000 դրամ;<br>Հինգերորդ փուլ – Արտաքին և ներքին ինժեներական գծերի անցկացման աշխատանքներ, ժամկետ՝ 2011թ. օգոստոս – 2012թ. դեկտեմբեր, նախատեսվում է 180,000,000 դրամ; |

| | | |
|---|---|---|
| | | Վեցերորդ փուլ – Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, ժամկետ 2011թ. օգոստոս – 2013թ. մարտ. Նախատեսվում է 51,000,000 դրամ;<br>Կազմակերպչական ծախսեր, ժամկետ 2010թ. մարտ – 2013թ. մարտ, Նախատեսվում է 86,000,000 դրամ:<br>* Նշված գումարներն իրենց մեջ չեն ներառում ԱԱՀ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը: | 1. Նախագծային աշխատանքներ և մակետ<br>30,000,000 դրամ;<br>2. Ժամանակավոր կառույցներ և հնագիտական հետազոտություններ<br>14,000,000 դրամ;<br>3. Հողային աշխատանքներ<br>20,000,000 դրամ;<br>4. Տեխնիկական և հեղինակային վերահսկողության ծախսեր<br>30,000,000 դրամ;<br>5. Կազմակերպչական ծախսեր (ժամանակավոր շինարարական գրասենյակի վարձակալական վճարներ, հեռախոսի, ինտերնետի, էլեկտրաէներգիայի, ջրի վարձավճարներ, գործուղման ծախսեր, շինարարության շուրջօրյա հսկողության նպատակով պահակային ծառայության ծախսեր, Երևանի քաղաքապետարանից և քաղաքաշինության տեսչությունից թույլտվությունների կամ եզրակացությունների համար նախատեսվող ծախսեր, նախագծային փաթեթի պատճենահանման ծախսեր, գրասենյակային ապրանքների ձեռք բերման ծախսեր, ժամանակավոր շինարարական գրասենյակի կազմակերպման նպատակով սարքավորումների՝ համակարգչի, տպիչի, պատճենահանման սարքի, հեռախոսի, սեղանների ձեռք բերման ծախսեր):<br>86,000,000 դրամ;<br>6. Բետոնե, երկաթբետոնե և քարային աշխատանքներ<br>760,000,000 դրամ;<br>7. Դռների և պատուհանների պատրաստման և տեղադրման աշխատանքներ<br>82,000,000 դրամ;<br>8. Տանիքի, հատակածածկերի, միջնորմների, աստիճանների իրականացման աշխատանքներ<br>140,000,000 դրամ;<br>9. Ներքին հարդարման աշխատանքներ<br>82,000,000 դրամ;<br>10. Արտաքին ջրագծի, կոյուղագծի, գազատարի և հեղեղատարի անցկացման աշխատանքներ<br>11,000,000 դրամ;<br>11. Ներքին ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման-սառեցման, օդափոխության համակարգերի իրականացման աշխատանքներ<br>41,000,000 դրամ;<br>12. Ներքին էլեկտրամատակարարման, հրդեհամարման, հեռուստատեսային, հեռախոսային, համակարգչային և տեսահսկման համակարգերի իրականացման աշխատանքներ<br>32,000,000 դրամ;<br>13. Օդափոխության, ջեռուցման համակարգերի սարքավորումների ձեռք բերում (օդակարգավորիչներ, ֆան կոյլներ, պոմպեր, օդամղիչներ, հաշվիչներ, չիլեր և կաթսաներ)<br>52,000,000 դրամ;<br>14. Վերելակի ձեռք բերում<br>13,000,000 դրամ; |

ՀՀ, Երևան
Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշըն Կորպորացիայի Մասնաճյուղ
RA, Yerevan
The Hirair and Anna Hovnanian Foundation Branch
01555988

4/8

3

| | | |
|---|---|---|
| | | 15. Շինարարական նյութերի ձեռք բերում (լամինատե հատակածածկ, կավրոլին, գրանիտե և մարմարե սալվածքներ, ներկեր, սալաքարեր, կերամիկական և կերամոգրանիտե սալիկներ, գիպսակարտոն և գ/կ մետաղական պրոֆիլներ)<br>30,000,000 դրամ;<br>16. Կոյուղա-ջրամատակարարման համակարգերի սարքավորումների ձեռք բերում (զուգարանակոնքեր, լվացարաններ, ծորակներ, միզամաններ, լոգատաշտակներ, ա/հ ակսեսուարներ)<br>6,000,000 դրամ;<br>17. Անջատիչների, վարդակների, լուսատուների, ավտոմատ անջատիչների, գեներատորի և մուտքային վահանակների ձեռք բերում<br>25,000,000 դրամ;<br>18. Կահույքի և այլ կահավորանքի ձեռք բերում (կահույք, վարագույրներ, շերտավարագույրների, զորգերի, սառնարանների, սալօջախների)<br>20,000,000 դրամ;<br>19. Գրասենյակային տեխնիկայի ձեռք բերում (հեռախոսներ, համակարգիչներ, տպիչներ, պատճենահանման սարքեր, հեռուստացույցներ, ֆաքսեր)<br>5,000,000 դրամ;<br>20. Տարածքի բարեկարգման, կանաչապատման և արտաքին լուսավորության իրականացման աշխատանքներ<br>51,000,000 դրամ:<br><br>* Նշված գումարներն իրենց մեջ չեն ներառում ԱԱՀ:<br>** 2-20-րդ կետերում նշված ապրանքները կամ այդ կետերում նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները հնարավոր է ներմուծվեն կամ ձեռք բերվեն տեղական շուկայում «Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշըն կորպորացիայի մասնաճյուղի» կողմից: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Նախատեսվում են կազմակերպչական ծախսեր՝ վարձակալական վճարներ, կոմունալ վճարներ, գործուղման ծախսեր և այլն 86,000,000 դրամ: Նշված գումարն իր մեջ չի ներառում ԱԱՀ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպություն-ների հետ: | Երևանի քաղաքապետարան, Քաղաքաշինության նախարարություն |
| 13. | Ծրագրի արդյունավետության [illegible] | «Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշըն» կորպորացիայի նախագահ Հրայր Հովնանյան, սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացնելու ՀՀ կառավարությանն բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

ՀՀ, Երևան
Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշըն Կորպորացիայի Մասնաճյուղ
RA, Yerevan
The Hirair and Anna Hovnanian Foundation Branch
01555988

Ծրագրի պատասխանատու Նաիրա Մելիքյան

4/8

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորոցիայի մասնաճյուղի)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| Միաժամանակ հայտնում ենք, որ որոշման նախագծի 5-րդ կետում նշված պայմանագրի ամսաթիվը չի համապատասխանում որոշման նախագծին կցված «Գաշես» ՍՊԸ-ի պայմանագրի ամսաթվին: | Հաշվի է առնվել՝ որոշման նախագիծը խմբագրվել է: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| Կից ներկայացված «Մեխտրանս» ԲԲԸ-ի, «Սարգիս-Արա» ՍՊԸ-ի և «Գաշես» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի համաձայն՝ իրականացվող գործարքների վերջնաժամկետները գերազանցում եմ ծրագրի 8-րդ կետում նշված ժամկետը: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում ճշտել նշված անհամապատասխանությունները: | Հաշվի է առնվել՝ որոշման նախագիծը խմբագրվել է: |

Մ. 15/4.2

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**____ նոյեմբերի 2012 թվականի N Մ- -Ա** Մ. 15/5.1
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-850-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** («ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի N 442 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի-ի N 3/3.8-1/-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի -ի N ՎՄ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռների մասին» («ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) N Մ-850-Ա որոշման 1-ին կետում «Աբակավիր 300մգ, N 60-22 տուփ, Լամիվուդին 150 մգ. N 60-4 տուփ և Էֆավիրենզ 200 մգ, N 30-246 տուփ՝ 4 տեղ, 16.05 կգ քաշով, 653.38 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 21050 հնդկական ռուփի, «Զվարթնոց» Մ/Տ» բառերը փոխարինել «Աբակավիր 300մգ, N 60-22 տուփ, Լամիվուդին 150 մգ. N 60-4 տուփ և Էֆավիրենզ 200 մգ, N 30-246 տուփ՝ 4 տեղ, 16.05 կգ քաշով, 653.38 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 20825 հնդկական ռուփի, «Զվարթնոց» Մ/Տ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

| | | |
|---|---|---|
| МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ РЕСПУБЛИКАНСКИЙ ЦЕНТР ГУМАНИТАРНОЙ ПОМОЩИ | | REPUBLIC OF ARMENIA MINISTRY OF HEALTH REPUBLICAN CENTRE OF HUMANITARIAN ASSISTANCE |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԺՐ-15/5.1


| | |
|---|---|
| Ք. Երևան, Նոր-Արեշ 35 | Г. Ереван, Нор-Ареш 35 |
| Հեռ. 47-21-11, 47-06-21 | тел. 47-21-11, 47-06-21 |
| Էլ. փոստ anmohk@mail.ru | |


N 442 << 20 >> նոյեմբերի 2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն. Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Խնդրում եմ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի թիվ Մ-850-Ա առ 19.10.2012թ. որոշման 1-ին կետում կատարել փոփոխություն՝ <<Աբակավիր 300մգ N60 – 22 տուփ, Լամիվուդին 150մգ N60 – 4 տուփ, Էֆավիրենզ 200մգ N30 – 246 տուփ 4 տեղ, 16,05 կգ քաշով, 653,38 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 21 050 հնդկական ռուփի>> փոխարինել << Աբակավիր 300մգ N60 – 22 տուփ, Լամիվուդին 150մգ N60 – 4 տուփ, Էֆավիրենզ 200մգ N30 – 246 տուփ 4 տեղ, 16,05 կգ քաշով, 653,38 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 20 825 հնդկական ռուփի>>՝ հիմք ընդունելով մատակարարի կողմից ուղարկված փոփոխված ավիաբեռնագրերը:

Կից ներկայացնում եմ փոփոխված ավիաբեռնագրերը:

Առդիր՝ 1 էջ:

2220

Տնօրեն Վարդան Դավթյան

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մ. խ. 20-31421
23 — 11 — 2012

Կատարեց՝ Լ. Բաղդասարյան

Հեռ 47-21-11

---

ԺՐ-15/5.1

064 BOM 16562276

**Not Negotiable**
**AIR WAYBILL**
*Issued by*
CZECH AIRLINES CARGO
Ruzyne Airport
160 08 Prague 6 Czech Republic

CSA CZECH AIRLINES CARGO

| Shipper's Name and Address | Shipper's Account Number |
|---|---|
| UPS SCS INDIA PVT LTD, BHAGATI COMPOUND, PLOT NO 2, COMPARTMENT NO 10/11, MAROL CO-OP INDL ESTATE, ... EAST, MUMBAI-400 059 | |

| Consignee's Name and Address | Consignee's Account Number |
|---|---|
| REPUBLICAN CENTER OF HUMANITARIAN ASSISTANCE OF MINISTRY OF HEALTH OF RA NOR ARESH 35 BUILDING YEREVAN, ARMENIA | |

Copies 1, 2 and 3 of this Air Waybill are originals and have the same validity.

It is agreed that the goods described herein are accepted in apparent good order and condition (except as noted) for carriage SUBJECT TO THE CONDITIONS OF CONTRACT ON THE REVERSE HEREOF. THE SHIPPER'S ATTENTION IS DRAWN TO THE NOTICE CONCERNING CARRIERS' LIMITATION OF LIABILITY. Shipper may increase such limitation of liability by declaring a higher value for carriage and paying a supplemental charge if required.

Dokumente geprüft — Kontrolle Zollstatus — T1 X C — FREIGHT ONLY — AVIAPARTNER — DOCS ONLY — Vor-Erfassung 16612 — AVIAPARTNER Felix Alber

Issuing Carrier's Agent Name and City: UPS SCS INDIA PVT LTD

Agent's IATA Code: 14-3 ... 573 | Account No.

Accounting Information

Airport of Departure (Addr. of First Carrier) and Requested Routing: MUMBAI

Reference Number

| To | By First Carrier | Routing & Destination | To | By | To | By | Currency | CHGS Code | WT/VAL PPD | WT/VAL COLL | Other PPD | Other COLL | Declared Value for Carriage | Declared Value for Customs |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| EVN | | | | | | | INR | | X | | X | | N V D | 0.00 |

| Airport of Destination | Flight/Date | For Carrier use only | Flight/Date | Amount of Insurance |
|---|---|---|---|---|
| YEREVAN | | | | |

INSURANCE - If Carrier offers insurance, and such insurance is requested in accordance with the conditions thereof, indicate amount to be insured in figures in box marked "Amount of Insurance".

Handling Information: MARKS & NOS: AS ADD * NON HAZARDOUS CERTIFICATE ATTACHED

(For U.S.A. use only) These commodities, technology or software were exported from the United States in accordance with the Export Administration Regulations. Diversion contrary to USA law prohibited. | SCI

| No. of Pieces RCP | Gross Weight | Kg lb | Rate Class / Commodity Item No. | Chargeable Weight | Rate / Charge | Total | Nature and Quantity of Goods (incl. Dimensions or Volume) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 04 | 16.05 | K | Q | 45.00 | 425.00 | 19125.00 | PHARMACEUTICALS 48 x 35 x 30 -01 48 x 42 x 26-01 42 x 26-02 |

एअर कार्गो सुरक्षा/AIR CARGO SECURITY — सी.एस.आई.ए.एम./CSIA NO:90046964/ — कार्गो जांचकर्ता/CARGO CLEARED .12 — 'क्ष' किरण/ प्रत्यक्ष जांच / विस्फोटक खोज 'X'-RAY / PHYSICAL-CHECKS / EDDS — दिनांक/DATE: ... हस्ताक्षर/SIGN

CORRECTION APPROVED UPS

AVIAPARTNER CARGO 15.11.2012

CARGO N4

4 16,05 19.11.12

05

| Prepaid | Weight Charge | Collect |
|---|---|---|
| 19125.000 | | |
| Valuation Charge | | |
| | | |
| Tax | | |
| | | |
| Total Other Charges Due Agent | | |
| 150.00 | | |
| Total Other Charges Due Carrier | | |
| ~~1775.00~~ 1550.00 | | |
| Total Prepaid | | Total Collect |
| ~~21050.00~~ | | |
| Currency Conversion Rates | | CC Charges in Dest. Currency |
| 20825.00 | | |
| For Carrier's use only at Destination | | Charges at Destination |

Other Charges:
AWB:150.00 CTC:50.00 MCC:*150.00
FSC:1125.00 SC:225.00 ~~XDC:225.00~~

Total Collect Charges

Shipper certifies that the particulars on the face hereof are correct and that in so far as any part of the consignment contains dangerous goods, such part is properly described by name and is in proper condition for carriage by air according to the applicable Dangerous Goods Regulations.

UPS SCS INDIA PVT LTD
Signature of Shipper or his Agent

1st NOV *12 MUMBAI
Executed on (date) at (place) Signature of Issuing Carrier or its Agent

UPS SCS INDIA PVT LTD

064

ORIGINAL 3 (FOR CONSIGNEE)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-850-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N 3/3.8-2/13550-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N ԴԴ/22/10038-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի N ՎՄ/3-6/11002-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով ստացված բեռները՝ դեղեր (Ատազանավիր 150 մգ, N 60–48 տուփ 1 տեղ, 4,4 կգ քաշով, 1056 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 21050 հնդկական ռուփի, «Զվարթնոց» Մ/Տ) և (Աբակավիր 300 մգ, N 60–22 տուփ, Լամիվուդին 150 մգ. N 60-4 և Էֆավիրենզ 200 մգ. N 30–246 տուփ 4 տեղ, 16.05 կգ քաշով, 653.38 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 21050 հնդկական ռուփի, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**Ն Ա Խ Ա Գ Ի Ծ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**— ———— 2012 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-911-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության)

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության 2012 թվականի նոյեմբերի 21-ի գրությունը, **ո ր ո շ ու մ է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի N Մ-438-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն)» N Մ-911-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «45000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «44500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.

2) «25 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «13.5 կգ ընդհանուր քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N: ՀՄ/3-6/12612-12
26.11.2012թ.  մր. 15/5, 2

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. նոյեմբերի 22-ի թիվ 15/15.4/16939-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-911-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

*Կատարող՝ Լ. Հակոբյան*
*Միջազգային հարաբերությունների բաժին*
*Հեռ. 060 54 43 49*

044/31139-12
26.11.2012թ